ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2021Թ. Ք. ԻՋԵՎԱՆ

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաղորդում 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների մասին: (Զեկ. Ա. Մարգարյան)
2. Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի հաստատում: (Զեկ. Գ. Ջավրուշյան)
3. 1-ին կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքների վերաբերյալ ամբիոնային հաշվետվությունների ներկայացում: (Զեկ. Մ. Ստեփանյան)
4. Ավարտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների քննարկում: (Զեկ. Մ. Ստեփանյան)
5. Ֆակուլտետի գիտական խորհրդի 2020-2021 ուստարվա II կիսամյակի աշխատանքների պլան-ժամանակացույցի քննարկում և հաստատում: (Զեկ. Ա. Մարգարյան)
6. 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակների թեկնածուների առաջադրում: (Զեկ. Ա. Մարգարյան)
7. Ընթացիկ հարցեր:

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա. Շ. Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Շ. Մարգարյանը: Խորհրդի նախագահը նշեց, որ ուսումնական պարապմունքները կվերսկսվեն փետրվարի իններին: Արդեն պատրաստ են երկրորդ կիսամյակի դասատախտակները, ձմեռային քննաշրջանի 1-ին լուծարքային շրջանի գրաֆիկները: Ա. Մարգարյանը ամբիոնների վարիչներին ևս մեկ անգամ հորդորեց վերջնական տեսքի բերել երկրորդ կիսամյակի առարկայական փաթեթները, հարցաշարերը: Զեկուցողը նշեց, որ համավարակի պայմաններում ֆակուլտետի 2020-2021 ուստարվա ուսումնական գործունեությունը կազմակերպված անցկացման առումով դասերը յուրաքանչյուր կուրսում կընթանան շաբաթական 3 օր առկա, իսկ 2 օր՝ առցանց՝ZOOM հարթակում: Այս ձևաչափը թույլ կտա ֆակուլտետում դասավանդումը դարձնել առավել ճկուն և արդյունավետ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Գ. Ջավրուշյանը, ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2020-21 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց «Դիզայն» կրթական ծրագրի պատասխանատու Գ. Ջավրուշյանը: Նա ներկայացրեց կրթական ծրագրերի վերանայման կարևորությունը, ապա ներկաներին ծանոթացրեց կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի և աշխատանքների կատարման ժամանակացույցի հետ: Նա նշեց, որ հարցը քննվել է ամբիոնների նիստերում և ձևավորվել են աշխատանքային խմբեր: Զեկուցողը առաջարկեց վերահաստատել հաստատված խմբերի կազմը:

«Դիզայն» կրթական ծրագրի աշխատանքային խումբ՝

1. Ջավրուշյան Գևորգ Մկրտիչի- «Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի» ամբիոնի ասիստենտ, ՀՀ և ՅՈՒՆԵՍԿՕ-ի նկարիչների միության անդամ, «Դիզայն» կրթական ծրագրի ղեկավար
2. Ստեփանյան Միեր Օգսենի - «Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի» ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ նկարիչների միության անդամ, ամբիոնի ասիստենտ
3. Մխիթարյան Քրիստինե Համլետի - «Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի» ամբիոնի ասիստենտ, ՀՀ դիզայներների միության անդամ
4. Չիբուիխչյան Անուշ Լյուբիկի - «Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի» ամբիոնի ասիստենտ, ՀՀ նկարիչների միության անդամ
5. Մելիքյան Լիլիթ Ռաֆայելի - Արվեստագիտության թեկնածու, ՀՀ նկարիչների միության անդամ, դոցենտ, Տերյան մշակութային կենտրոնի տնօրեն
6. Ստեփանյան Շուշան Արթուրի- Դեկորատիվ- կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի դասախոս
7. Մելյան Մետաքսե Սարգսի- «Դիզայն» կրթական ծրագրի III կուրսի ուսանողուհի

«Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի աշխատանքային խումբ

1. Ֆլջյան Լիլիթ Հենրիկի - մ.գ.թ. դոցենտ, ՀՀ նկարիչների միության անդամ
2. Ջավրուշյան Գևորգ Մկրտիչի- «Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի» ամբիոնի ասիստենտ, ՀՀ և ՅՈՒՆԵՍԿՕ-ի նկարիչների միության անդամ, «Դիզայն» կրթական ծրագրի ղեկավար
3. Ստեփանյան Միեր Օգսենի - «Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի» ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ նկարիչների միության անդամ, ամբիոնի ասիստենտ
4. Ասատրյան Համլետ Միհրդատի – «Գծանկարի, գունանկարի և քանդակի» ամբիոնի վարիչ, ՀՀ և ՅՈՒՆԵՍԿՕ-ի նկարիչների միության անդամ, արվեստագիտության դոցենտ

5. Մելիքյան Լիլիթ Ռաֆայելի - Արվեստագիտության թեկնածու, ՀՀ նկարիչների միության անդամ, դոցենտ, Տերյան մշակութային կենտրոնի տնօրեն
6. Չիբուխչյան Անուշ Լյուբիկի- «Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի» ամբիոնի ասիստենտ, ՀՀ նկարիչների միության անդամ
7. Չիբուխչյան Դոնարա Լևոնի- «Դեկորատիվ-կիրառական արվեստ և դիզայն» ամբիոնի ասիստենտ, ՀՀ նկարիչների միության անդամ
8. Մելքումյան Միսակ Ստյոպայի- «Դեկորատիվ-կիրառական արվեստ և դիզայն» ամբիոնի դասախոս, Տավուշի մարզի գլխավոր ճարտարապետ
9. Ամիրյան Սարինե Սարմենի – «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի II կուրսի ուսանողուհի

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀՆՄ անդամ, դոցենտ Հ. Ասատրյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը

ՈՐՈՇԵՑԻՆ.

Վերահաստատել ամբիոնի կողմից հաստատված ֆակուլտետի կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կազմերը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց «Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի» ամբիոնի վարիչի պաշտոնակատար Մ. Ստեփանյանը: Նա նշեց, որ սկսած 2020-2021 ուստարվանից, մասնագիտական որոշ առարկաների բովանդակության մեջ ներդրվել են հետազոտական բաղադրիչ, որը գնահատվում և մաս է կազմում արդյունարար գնահատականի մեջ: Զեկուցողը ներկայացրեց դասավանդողների մտահոգությունները հետազոտական աշխատանքների վերաբերյալ, ինչը կապված է ուսանողների մտավոր կարողությունների և հետազոտական հմտությունների հետ: Մ. Ստեփանյանը առաջարկեց վերլուծել առաջին կիսամյակի հետազոտական բաղադրիչի հետ կապված բացթողումներն ու

թերացումները, հաշվի առնել առարկայի առանձնահատկությունները՝ հնարավորինս բացառելով դրանք երկրորդ կիսամյակում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը, ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը, ՀԴՄ անդամ Գ. Ջավրուշյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. 1-ին կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքները գնահատել բավարար:

2. Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ հետևել երկրորդ կիսամյակի ՀԲ ունեցող առարկաների բովանդակությանը, սահմանված վերջնարդյունքների լիարժեք ձեռքբերմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ հանդես եկավ «Դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի» ամբիոնի վարիչ Մ. Ստեփանյանը: Զեկուցողը նշեց, որ յուրաքանչյուր ղեկավար ամսվա մեջ որոշակի գրաֆիկով կոնսուլտացիոն հանդիպումներ է ունենում ուսանողների հետ: Զեկուցողը ներկայացրեց նաև աշխաանքների ներկայացման վերաբերյալ ուսանողների մտահոգությունը (ավարտական աշխատանքները պետք է ներկայացվեն իրական (առարկայական) և նախագծային մակետի տեսքով, թե՞ միայն նախագծային): Մ. Ստեփանյանը առաջարկեց հանդիպել ուսանողների հետ և անհատական քննարկել՝ ելնելով թեմայի առանձնահատկություններից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը, ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը, ՀԴՄ անդամ Գ. Ջավրուշյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ավարտական աշխատանքներ պետք է ներառեն և՛ տեսական, և՛ գործնական հատվածներ:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի հինգերորդ հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Շ. Մարգարյանը: Զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետի գիտական խորհրդի 2020-2021 ուստարվա II կիսամյակի աշխատանքների պլան-ժամանակացույցը և առաջարկեց քննարկել (Հավելված 1):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀՆՄ անդամ Մ. Ստեփանյանը, ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը, ՀԴՄ անդամ Գ. Ջավրուշյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Դիմել մասնաճյուղի տնօրինությանը՝ հաստատելու գիտական խորհրդի աշխատանքների պլան-ժամանակացույցը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 6-րդ հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Շ. Մարգարյանը: Զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետի կողմից 2020-2021 ուստարվա II կիսամյակում անվանական կրթաթոշակի հավակնող ուսանողների ցուցակը: Զեկուցողը նշեց այն չափանիշները, որոնք հաղթահարելուց հետո ուսանողը կարող է հավակնել անվանական կրթաթոշակի, որոնք են՝ անառարկելի ակադեմիական բարձր առաջադիմությունը, պատշաճ կարգապահությունը և հասարակական ակտիվությունը: Զեկուցողը փաստեց, որ ֆակուլտետում քիչ են անընդմեջ ակադեմիական բարձր առաջադիմություն ցուցաբերող ուսանողների թիվը, և նրանց պետք է խրախուսել:

Զեկուցողը առանձնացրեց «Դիզայն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի Մետաքսե Մելյանին: Վերջինս հինգ կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն: Զեկուցողն առաջարկեց Մետաքսե Մելյանին ներկայացնել որպես «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակի թեկնածու:

Զեկուցողը առանձնացրեց նաև «Դիզայն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի Անի Դավթյանին: Վերջինս չորս կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն: Զեկուցողն առաջարկեց Անի Դավթյանին ներկայացնել որպես «Սպարտակ Սարգսյան» անվանական կրթաթոշակի թեկնածու:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Տ. Բագամյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Դիմել մասնաճյուղի տնօրինությանը՝ հաստատելու Մետաքսե Մելյանին որպես «Վազգեն Սարգսյան» և Անի Դավթյանին՝ «Սպարտակ Սարգսյան» անվանական կրթաթոշակի թեկնածուներ:

ԼՍԵՑԻՆ. –

Օրակարգում որպես ընթացիկ հարց քննարկվեց գիտական դրամաշնորհների հատկացման նպատակով անցկացվելիք մրցույթի մրցութային հանձնաժողովի անդամի առաջադրումը: Զեկուցողը նշեց, որ նորաստեղծ «Տավուշ» հետազոտական կենտրոնը առաջիկայում նախատեսում է անցկացնել գիտական դրամաշնորհի հատկացման մրցույթներ և այդ նպատակով անհրաժեշտ է ֆակուլտետի գիտխորհրդի կողմից առաջադրել և հաստատել մրցութային հանձնաժողովի անդամի թեկնածություն: Դեկանը նշեց, որ բոլոր ամբիոններում իրականացվել են քննարկումներ, լսել են բոլոր առաջարկությունները: Ի վերջո, որպես գիտական դրամաշնորհի հատկացման նպատակով անցկացվելիք մրցույթի մրցութային հանձնաժողովի անդամի թեկնածու է առաջադրվել Հայոց լեզվի և գրականության

ամբիոնի բ. գ. թ., դոցենտ Վահան Արշակի Աղաբաբյանի թեկնածությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀՆՄ անդամ Մ. Ստեփանյանը, ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը, ՀԴՄ անդամ Գ. Ջավրուշյանը:

Նրանք նշեցին, որ ամբիոններում հանգամանորեն քննարկվել են գիտական դրամաշնորհի հատկացման նպատակով անցկացվելիք մրցույթի մրցութային հանձնաժողովի անդամի թեկնածությունը: Արտահայտվողները բարձր գնահատեցին առաջադրված թեկնածուի գիտական և մասնագիտական որակները:

Տեղի ունեցավ բաց քվեարկություն, որով առաջադրված թեկնածուն միաձայն ընտրվեց:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Քվեարկության արդյունքները հաշվի առնելով՝ Կիրառական արվեստի ֆակուլտետի կողմից հաստատել դրամաշնորհի հատկացման նպատակով անցկացվելիք մրցույթի մրցութային հանձնաժողովի անդամ Վահան Աղաբաբյանի թեկնածությունը:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. Շ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Հավելված 1.

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՏՆՕՐԵՆ՝ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020-2021 ՈՒՍՏԱՐՎԱ

II ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	*ՕՐԱԿԱՐԳ*	*ՁԵԿՈՒՅՑՈՂՆԵՐ*	*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ*
Հունվար	1. Հաղորդում 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման նախապատրաս-տական աշխատանքների մասին:	*Դեկան*	
	2. Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի և աշխատանքների կատարման ժամանակացուցների հաստատում:	*ԿԾ պատասխանա-տուներ*	
	3. 1-ին կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքների վերաբերյալ ամբիոնային հաշվետվությունների ներկայացում:	*Ամբիոնների վարիչներ*	
	4. Ավարտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների քննարկում:	*Ամբիոնների վարիչներ*	
	5. Ֆակուլտետի գիտական խորհրդի 2020-2021 ուստարվա II կիսամյակի աշխատանքների պլան-ժամանակացույցի քննարկում և հաստատում:	*Դեկան*	
Փետրվար	1. 2020-21թթ. ուս. տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ամփոփում:	*Դեկան*	
	2. Կրթական ծրագրերում փոփոխություններ կատարելու մասին վերանայող աշխատանքային խմբերի առաջարկների քննարկում:	*ԿԾ պատասխանա-տուներ*	
	3. 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակների թեկնածուների առաջադրում:	*Դեկան*	
	4. Հաղորդում ամբիոններում 2-րդ կիսամյակի դասընթացների փաթեթների առկայության և վերանայման ընթացքի մասին:	*Ամբիոնների վարիչներ*	
Մարտ	1. Հաղորդում ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին:	*Ամբիոնների վարիչներ*	

	2. Ավարտական աշխատանքների նախապաշտպա-նությունների և պաշտպանությունների ժամանակացույցների հաստատում:	*Դեկան*	
	3. Հաղորդում ավարտական կուրսերի քննաշրջանի կազմակերպման վերաբերյալ և քննաշրջանի գրաֆիկի հաստատում:	*Դեկան*	
	4. 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփում:	*Դեկան*	
	5. Հաղորդում 2-րդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաս-տական աշխատանքների մասին:	*Դեկան*	
	6. Ֆակուլտետի 2021-2025 և 2021-2026 ուստարիների ուսումնական պլանների հաստատում:	*Դեկան, ամբիոնների վարիչներ*	
	7. Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքների ներկայացում:	*ԿԾ պատասխանա-տուներ*	
	8. Առկա ուսուցման 1-ին կիսամյակում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման արդյունքների ներկայացում:	*Դեկան, ամբիոնների վարիչներ*	
Ապրիլ	1. 2-րդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում:	*Դեկան*	
	2. Ավարտական աշխատանքների նախապաշտպա-նությունների արդյունքների ամփոփում:	*Ամբիոնների վարիչներ*	
	3. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի անդամների առաջադրում:	*Դեկան, ամբիոնների վարիչներ*	
	4. Հաղորդում 2-րդ կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաս-տական աշխատանքների վերաբերյալ:	*Դեկան, ամբիոնների վարիչներ*	
	5. 2021-22 ուսումնական աշխատանքային պլանների հաստատում:	*Դեկան*	
Մայիս	1. Ավարտական կուրսերի քննաշրջանի արդյունքների ամփոփում:	*Դեկան*	
	2. Առկա ուսուցման 4-րդ կուրսի 2-րդ կիսամյակում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման արդյունքների ներկայացում:	*Դեկան, ամբիոնների վարիչներ*	
	3. 1-ինից 3-րդ կուրսերի 2-րդ կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի հաստատում:	*Դեկան*	

	4. Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների հաջորդ ուստարվա անհատական բեռնվածությունների ներկայացում և քննարկում։	*Ամբիոնների վարիչներ*	
	5. ԿԾ պատասխանատուների գործունեության հաշվետություն։	*ԿԾ պատասխա-նատուներ*	
Հունիս	1. 2021թ. ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփում։	*Դեկան, Ամբիոնների վարիչներ*	
	2. 2-րդ կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքների ներկայացում։	*Ամբիոնների վարիչներ*	
	3.Ուսանողական խորհրդի (ՈՒԽ) նախագահի կատարած աշխատանքների ներկայացում և ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) նախագահի հաշվետվություն։	*ՈՒԽ և ՈՒԳԸ ֆակուլտետի նախագահներ*	
	4. ֆակուլտետի ամբիոնների վարիչների ամփոփիչ հաշվետվություն։	*Ամբիոնների վարիչներ*	
Հուլիս	1. 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում։	*Դեկան*	
	2. Ֆակուլտետի 2020-21 ուստարվա գործունեության վերաբերյալ դեկանի հաշվետվություն։	*Դեկան*	

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ *Ա. Շ. ՄԱՐԳԱՐՅԱՆ*

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ *Ք. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ*